ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

04.05.2015թ.
248-ի 9

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպման գրասենյակի տնօրեն Արման Ծատուրյանին

Տեղեկատվություն ստանալու կրկնակի հարցում

Հարգելի պարոն Ծատուրյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը 30.03.2015թ.-ին տեղեկություն ստանալու գրավոր հարցմամբ դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. Ո՞ր պետությունների ղեկավարներն են պաշտոնապես հաստատել իրենց մասնակցությունը ապրիլի 24-ին Երևանում՝ Ցեղասպանության 100-ամյա տարելիցին,
2. Կա արդյո՞ք 100-ամյակի ծրագրերի և միջոցառումների ամբողջական ցանկ, եթե այո, խնդրում եմ այն կցել պատասխանին,
3. Որքա՞ն է կազմում 100-ամյակի ընդհանուր բյուջեն,
4. Որքա՞ն գումար է ծախսել կամ նախատեսում հատկացնել Հանձնաժողովը կոնկրետ միջոցառումների և ծրագրերի համար, ի՞նչ հանգանակություններով են գոյացել այդ գումարները,
5. Ո՞ր ընկերությունների հետ է համագործակցել կամ համագործակցելու Հանձնաժողովը կոնկրետ ծրագրերի շուրջ, և որքա՞ն գումարն է հատկացվել կամ հատկացվելու այդ ընկերություններին:

Սակայն, մինչ օրս որեւէ պատասխան չենք ստացել:

Ելնելով վերոգրյալից եւ ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ եւս մեկ անգամ խնդրում ենք տրամադրել վերանշյալ տեղեկությունները:

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան